Հայաստանի կողմից Պաղեստինի ճանաչման նպատակները

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 01.07.2024 թ.[1]

21.06.2024-ին հայտնի դարձավ, որ Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչել է Պաղեստինի պետությունը, ինչին ակնթարթորեն հետևեց Թել Ավիվի արձագանքը, և նույն օրը հայտարարվեց, որ Իսրայելում Հայաստանի դեսպանը կկանչվի այդ երկրի ԱԳՆ՝ պարզաբանումների համար: Հայկական կողմի քայլին արագ արձագանքեցին նաև իսլամական երկրները: Թուրքիան առաջիններից էր, որ իր գոհունակությունը հայտնեց Երևանի որոշման առնչությամբ: Դրանից հետո նրան միացան Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ) և Կատարի, Հորդանանի, Լիբանանի, Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի կառավարությունները: Ի վերջո, ՀԱՄԱՍ-ի ներկայացուցիչները հանդես եկան համապատասխան հայտարարությամբ. *«Մենք ողջունում ենք Հայաստանի հայտարարությունը Պաղեստին պետության ճանաչման վերաբերյալ և սա համարում ենք կարևոր քայլ՝ ուղղված մեր ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչման ամրապնդմանը, ինչպես նաև մեր երկու բարեկամ ժողովուրդների հարաբերությունների մասին պատմության նոր էջին»:*

Հայաստանի իշխանությունների որոշումը ոչ պակաս հակասություններ առաջացրեց երկրի ներսում, քան միջազգային ասպարեզում: Մասնավորապես, որոշ քաղաքական շրջանակներ և իշխանությանը ընդդիմացող հասարակության մի մասը տեղի ունեցածում հակված է տեսնել Անկարայի նախաձեռնությունը, որն, իբր, ճնշում է գործադրել Երևանի վրա: Այս վարկածը կարող է հաստատել Ռ. Էրդողանի և Ն. Փաշինյանի հեռախոսազրույցի փաստը, որը տեղի է ունեցել ՀՀ ԱԳՆ համապատասխան հայտարարության նախորդ օրը: Ակտիվորեն քննարկվում է նաև այն, որ Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի ժամանակ ՀԱՄԱՍ-ը աջակցություն է հայտնել Ադրբեջանին, ապա շնորհավորել նրան *«ազատագրական արշավում տարած հաղթանակի կապակցությամբ»:* Եվ, վերջապես, վերջին օրերին լայն տարածում գտավ այն խոսույթը, որ ՀՀ-ն, որը ժամանակին չճանաչեց Արցախի Հանրապետությունը, այժմ «*օպերատիվ կերպով*» ճանաչեց Պաղեստինի ժողովրդի ինքնորոշման և ինքնիշխանության իրավունքը:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության արտաքին քաղաքական գործունեության թափանցիկության բացակայությունը, վերը նշվածի, ինչպես նաև այլ վարկածների ու փաստարկների ի հայտ գալը հայկական միջավայրում բնական երևույթ է: Սակայն, միևնույն ժամանակ, կան լայն հասարակայնության աչքից դուրս մնացող բազմաթիվ նրբերանգներ, որոնք լույս են սփռում ՀՀ կառավարության ձեռնարկած քայլի «*օբյեկտիվ անհրաժեշտության» պատճառների վրա:*

[1] Նյութի բնագիրը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 26.06.2024 թ.:

Նախ՝ Պաղեստինի ճանաչման ներկա միջազգային ալիքի ֆոնին Երևանի քայլը չի կարող համարվել *«անժամանակ նախաձեռնություն»*, որն, իբր, լայնածավալ արտաքին քաղաքական խնդիրներ կառաջացնի Հայաստանի համար:

Երկրորդ, եվրոպական հանրության ճնշող մեծամասնությունը, որի հետ ինտեգրումը ՀՀ ներկայիս իշխանությունն ընտրել է որպես երկարաժամկետ ռազմավարական նպատակ, Պաղեստինի անկախությունը համարում է մերձավորարևելյան խնդրի «*միակ և անխուսափելի» լուծումը:*

Երրորդ՝ Պաղեստինի ճանաչումը լրացուցիչ խթան կծառայի Հայաստանի հարաբերություններն ամրապնդելու արաբական երկրների, իսլամական աշխարհի և, առաջին հերթին, Իրանի հետ, որը ներկայումս Պաղեստինի գլխավոր հենասյունն է: Այս քայլը պետք է համարել բարեկամական ժեստ Իրանի նկատմամբ, այլ ոչ թե Թուրքիայի, որը, սակայն, հնարավոր է, հենց ինքն է ցանկացել համոզել Երևանին նման որոշման գնալ:

Չորրորդ՝ Հայաստանի և Իսրայելի միջև հարաբերությունների անխուսափելի բարդացումը դժվար թե պետք է գոյութենական գործոն համարել, քանի որ պաշտոնական Թել Ավիվը, նույնիսկ առանց Հայաստանի կողմից Պաղեստինի ճանաչման, ամեն ինչ արեց, որպեսզի հայ-իսրայելական հարաբերությունները չլինեն ամենաբարձր մակարդակի վրա: Դրա ապացույցն է Թել Ավիվի աջակցությունը Բաքվին 2020 թ. ղարաբաղյան պատերազմի ժամանակ, հրեական պետության բացառապես ադրբեջանամետ դիրքորոշումը բոլոր միջազգային հարթակներում, իսրայելական զենքի համակարգված մատակարարումն Ադրբեջան և այլն: Նույնիսկ այն բանից հետո, երբ Եգիպտոս կատարած այցի ընթացքում Ի. Ալիևը հայտարարել է, որ պաշտպանում է «երկու պետությունների» գաղափարը (Պաղեստինի *դե ֆակտո* ճանաչումը), իսրայելական իշխանությունները դաշնակից Ադրբեջանին դեմարշ չեն հայտարարել: Բաքվի բեռնատար ինքնաթիռները շարունակում են զենքի տեղափոխման թռիչքներ իրականացնել դեպի իսրայելական Օվդա օդանավակայան, իսկ ադրբեջանական նավթը շարունակում է կայուն հոսել դեպի Թել Ավիվ: Այսպիսով, հայ-իսրայելական հարաբերությունների համատեքստում պետք է փաստել, որ քիչ հավանական է, որ «Պաղեստինի չճանաչումը» Երևանին հնարավորություն տա կոնցեպտուալ բարելավելու իրադրությունը հրեական պետության հետ հարաբերություններում:

Հինգերորդ, Բաքվի կողմից ՀԱՄԱՍ-ից ստացած շնորհավորանքների մասին հղումը լիովին ճիշտ չէ, քանի որ ՀԱՄԱՍ-ը նույնական չէ Պաղեստինի հետ: Սա մի կազմակերպություն է, որը մինչև վերջերս վերահսկում էր Գազայի հատվածը, մինչդեռ *«մայրցամաքային»* Պաղեստինը վերահսկվում է «Ֆաթահի» կողմից, որը հայտնի է Հայաստանի և հայերի նկատմամբ իր ավելի լոյալ վերաբերմունքով: Սրա ապացույցներից մեկն էլ 2024 թ. մարտին հայուհի Վարսեն Աղաբեկյանի՝ Մահմուդ

Աբասի կողմից Պաղեստինի արտաքին գործերի պետական նախարարի պաշտոնում նշանակվելն է: Այս նշանակումը, զուգորդված Պաղեստինի վերաբերյալ Երևանի նախաձեռնության հետ, կարող է լավ խթան հանդիսանալ հայ-պաղեստինյան և հայ-արաբական հարաբերությունները որակապես նոր մակարդակի հասցնելու համար:

Եվ վերջապես, վեցերորդը, Պաղեստինի ժողովրդի անկախության իրավունքի ճանաչումը, եթե ոչ հիմա, ապա միջնաժամկետ հեռանկարում, կնպաստի ղարաբաղյան հիմնախնդրի վերակենդանացմանը՝ ներառյալ էթնիկ զտումների համար Բաքվի պատասխանատվության, պատմական հայրենիք վերադառնալու հայերի իրավունքի և հայկական Արցախի՝ քաղաքական կարգավիճակի ձեռքբերման հարցը:

Այսպիսով, ՀՀ նախաձեռնությունը դժվար թե պետք է համարել հարկադրանքի տակ կայացված և միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում երկրի ռազմավարական շահերին չբավարարող սխալ իրավիճակային որոշում: